

Կ Ո Մ Ի Տ Ա Ս

•

Քո երգերում՝ ֆարֆարոս
 Հերկերի մէջ անջրդի,
 Հատ-հատ ցորեն են ցանում
 Որպէս յոյս ու յիշատակ.
 Քո երգերում՝ ամօթխած
 Հարսը իր ծոցն է բացում,
 Պառկած դէզին, աստղալոյս
 Գիշերներին կապուտակ:
 Քո երգերում՝ որբացած
 Խնկի ծառերն են ծաղկում,
 Ազդիկները՝ կժերով
 Ջուր են բերում աղբիւրից,
 Քո երգերում՝ ամպում են
 Հայոց սարերն երազկոտ,
 Եւ ձիերն են խրխնջում
 Հովիտներից, ձորերից:
 Քո երգերում՝ վամֆերից
 Ազանիներն են թռչում,
 Հացի բոյր է տարածում
 Երդիֆներից կանաչած,
 Քո երգերում՝ ցամաքորդը
 Յոգնած նստում է ֆարին,
 Նրան պէտք է մի թաս ջուր,
 Նրան պէտք է պատառ հաց:
 Քո երգերում՝ իր տանից
 Քշուած մարդն է հեկեկում,
 Քո երգերում կայ կորուստ
 Հայրենի տան ու ծառի,
 Քո երգերում կայ թախիծ,
 Եւ կայ անմեղ մի բողոք,
 Եւ տիրոջից թալանած
 Մայիւնը՝ ուլ ու գառի...
 Քո երգերում՝ հորովելն
 Երկարում է ծխի պէս,
 Եւ սարերի լանջերին
 Լոյսն ու մութն են համբուրում,

Քո երգերում՝ եղեգնեայ
 Սրինգներն են սլսում,
 Մեր դարաւոր, մեր յոգնած
 հենդ գետերի ակերին:
 Քո երգերում՝ սայլերը
 Քար ու ծաղիկ են տանում,
 Արեւի շողն են տանում
 հրնիթներին հողածածկ.
 Քո երգերում՝ մեր երկրի
 Հորիզոնն է լայնանում.
 Եւ կռունկներն են չում
 Թեւիկներով շողարձակ:
 Դու դարաւոր մեր վշտի,
 Մեր արթնութեան ձայնագիր
 Դու ձայնաւոր մեր հոգու
 Մեկամազձիկ աշտարակ,
 Մեր արտերին՝ դու անձրեւ,
 Մեր օճախի արդար ծուխ,
 Դու արիւնը մեր ազգի,
 Դու մեր սիրոյ պատարագ...

ՎԱՀԱԳՆ ԿԱՐԵՆՅ

Երեւան